

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/05**

ք. Երևան

«19» հունիսի 2020թ.

«ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարությունը», ի դեմս գլխավոր քարուղարին փոխարինող ԳՁ Ալեքսանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_1 = V_2 / (1 + X \cdot Y \cdot Z)$, որտեղ՝

V_1 -ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

V_2 -ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

X -ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Y -ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Z -ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՎՈՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Երևան Կ.Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011018703
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղարին փոխարինող
Գ.Ալեքսանյան



«Գարանտսերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճՁ 20
«Կոնվերսանկ» ՓԲԸ
Հ/Հ 193004674290
ՀՎՀՀ՝ 00840437
տնօրեն Մ.Նիկողոսյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ձ» դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/«Ձ» դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50111130/6	Տեխնիկական բնութագիրը կցվում է***	դրամ		1	Ք. Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2020թ.

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ փարվա դեկտեմբերի 25-ը:

Տեխնիկական բնութագիր***

N	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղների և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցի մակնիշը (տեսակը)				
		Տոյոտա Կամրի 2.5լ (TOYOTA Camry 2.5l) 2013թ				
1	2	3	4	5		
SU-1 ներառվող ծառայությունների անվանում						
1	Բռնկման համակարգի ստուգում				2,000	
2	Կցորդման համակարգի ստուգում				2,000	
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում				2,000	
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում				2,000	
5	ABS համակարգի ստուգում				2,000	
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում				2,000	
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում				2,000	
8	Շարժիչի հանում և տեղադրում				100,000	
9	Շարժիչի վերանորոգում				24,000	

37	Շարժիչի վանոսների փոխարինում					
38	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)					6,000
39	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով					6,000
40	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում					6,000
41	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով					10,000
42	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում					2,000
43	Շարժիչի յուղի մղիչի մաքրում					2,000
44	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում					2,000
45	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում					4,000
46	Յուղի ծորակի փոխարինում					2,000
47	Օդաքաշակ փողրակի փոխարինում					12,000
48	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում					8,000
49	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում					48,000
50	Բ/լիստեի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում					2,000
51	Ուղղորդիչ վանոսների փոխարինում					14,000
52	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում					8,000
53	Շարժիչի կափույրի փոխարինում					8,000
54	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում					2,000
55	Մխոցամատի փոխարինում					10,000
56	Շարժիչի շարժաթևի փոխարինում					32,000
57	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ					200
58	Շարժիչի բաշխիչ լիստեի երիթակի փոխարինում					4,000
59	Ատամնանիվի փոխարինում					6,000
60	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում					4,000
61	Սուխարիկ փոխարինում					4,000
62	Շարժիչի կալունի փոխարինում					10,000
63	Շարժիչի հանդարտիչի փոխարինում					8,000
64	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում					6,000

65	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում				14,000
66	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով				8,000
67	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում				10,000
68	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում				1,400
69	Շարժիչի գամասեղի փոխարինում				7,600
70	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով				3,200
71	Գլխիկի հեղույսի փոխարինում				3,200
72	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում				12,000
73	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում				12,000
74	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում				2,000
3. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
75	Յուղի և յուղի գտիչի փոխարինում				400
76	Ավտոմեքենայի յուղում				800
77	Համակարգչային ախտորոշում, թերուպյունների վերացմամբ				3,600
78	Յուղի ռադիատորի փոխարինում				8,000
79	Յուղի ռադիատորի նորոգում				8,000
80	Յուղի գտիչի փականի փոխարինում				2,000
81	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում				16,000
82	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում				16,000
83	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում				16,000
84	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում				16,000
85	Վառելիքի փողրակի փոխարինում				3,200
86	Վառոցքի մոմի փոխարինում				2,000
87	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում				6,000
88	Օդի գտիչի փոխարինում				1,200

89	Կոնդիցիոների գտիչի փոխարինում					1,200
90	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում					4,000
91	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում					2,000
92	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում					2,000
93	Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում					2,000
94	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում					28,000
95	Ինժեկտորի բոցամուղի փոխարինում					4,000
96	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում					6,000
97	Բոցամուղի կողավորում					8,000
98	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկների փոխարինում					4,800
99	Բենզամղիչի փոխարինում					6,000
100	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում					2,400
101	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում					2,000
102	Բռնկման կարգավորում					2,000
103	CO կարգավորում					2,000
104	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում					8,000
105	Ղեկավարման բլոկի վերանորոգում					16,000
106	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում					6,000
107	Վառելիքի բաքի մաքրում					3,600
108	Արագարարի ոտնակի փոխարինում					2,000
109	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում					2,000
110	Օդի ծախսի տվիչի փոխարինում					4,000
111	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում					6,000
112	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում					2,000
113	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում					2,000
114	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում					2,000
115	Յուղի ճնշման տվիչի փոխարինում					4,800
116	Տվիչի փոխարինում					2,000

4. Սառեցման և արտածման համակարգ

117	Հովհարի փոխարինում				8,000
118	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում				4,800
119	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում				8,000
120	Ռադիատորի շրջանակի փոխարինում				6,000
121	Շերտափեղկի փոխարինում				6,000
122	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում				6,000
123	Ռադիատորի կալունակի փոխարինում				2,000
124	Ռադիատորի փողրակի փոխարինում				2,000
125	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում				10,000
126	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում				2,000
127	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում				4,000
128	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում				8,000
129	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում				18,000
130	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում				8,000
131	Ընդարձակող բաքի փոխարինում				4,000
132	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում				2,000
133	Ջրի ծորակի փոխարինում				1,200
134	Հովացման հիդրոկցորդի փոխարինում				4,000
135	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում				1,200
136	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում				6,000
137	Հովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում				4,000
138	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված				26,000
139	Վառարանի ռադիատորի նորոգում				4,000
140	Վառարանի շարժիչի փոխարինում				8,000
141	Թերմոստատի փոխարինում				6,800

142	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով					8,000
143	Գեներատորի փոկի փոխարինում					5,600
144	Գեներատորի փոկի ձգող հղովակի փոխարինում					4,800
145	Ջրի ուղիատորի վերանորոգում					22,000
146	Սառեցման համակարգի օդահանում					2,000
147	Խլարարի գոֆրայի փոխարինում					6,000
148	Կատալիզատորի հանում					10,000
149	Խլարարի կատալիզատորի տվիչի փոխարինում					4,000
150	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում					4,000
151	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում					4,000
152	Խլարարի անուրի (xамыр) փոխարինում					800
153	Խլարարի ներդիրի փոխարինում					4,000
154	Խլարարի կախոցի փոխարինում					4,000
155	Կալունակի փոխարինում					20,000
156	Ռեզոնատորի փոխարինում					10,000
157	Հովացման հեղուկի փոխարինում					1,200
5. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ						
158	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում				0	
159	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները				0	
160	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում				0	
161	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում				0	
162	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում				0	
163	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում				0	
164	Կցորդման երկժանիի փոխարինում				0	
165	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները				0	
166	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում				0	
167	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում				0	

168	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում				0
169	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում				0
170	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում				24,000
171	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում				0
172	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում				0
173	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում				0
174	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում				0
175	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում				0
176	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում				0
177	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում				0
178	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում				0
179	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում				0
180	ՓՏ-ի բարձիկի փոխարինում				0
181	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում				0
182	ՓՏ-ի յուղի փոխարինում				0
183	Վազքաչափի շարժաբերի փոխարինում				4,000
184	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները				240,000
185	ԱՓՏ-ի հավաքածուի փոխարինում				0
186	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում				16,000
187	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում				16,000
188	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում				16,000
189	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր զլանի կալունակի փոխարինում				16,000
190	ԱՓՏ-ի սուլենոիդների փոխարինում				16,000
191	ԱՓՏ-ի համակարգչի և սուլենոիդների փոխարինում				48,000
192	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում				20,000
193	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկների փոխարինում				6,000
194	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում				4,000

195	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում					10,000
196	ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում					12,000
197	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում					8,000
198	ԱՓՏ-ի յուղի փոխարինում					4,000
199	ԱՓՏ-ի զտիչի լվացում, մաքրում քարտերի հանում և տեղադրումով					4,000
6. Կախոց						
201	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում				0	
202	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում					24,000
203	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում					12,000
204	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում					8,000
205	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում					8,000
206	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում					8,000
207	Անվակունդի գամաստեղի և հեղուսի փոխարինում(մեկ անիվի համար)					8,000
208	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում					2,000
209	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում					8,000
210	Առջևի զսպանակի փոխարինում					4,800
211	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում					2,400
212	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում					5,600
213	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ					6,000
214	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում					4,000
215	Անիվների պաշտպանիչի փոխարինում					800
216	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում					400
217	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում					400
218	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ					6,000
219	Վերևի լծակի հեղույսի փոխարինում					4,000

220	Գնդե հողակապի պատյանի փոխարինում					800
221	Գնդե հողակապի փոխարինում					1,600
222	Գնդե հողակապի նորոգում					6,000
223	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում					6,000
224	Առջևի կայունարարի վրանների փոխարինում					2,000
225	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում					4,000
226	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում					400
227	Հետևի կայունարարի վրանների փոխարինում 1 հատ					3,200
228	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում					2,400
229	Հետևի կայունարարի կալունակի փոխարինում					3,200
230	Հետևի զսպանակների փոխարինում					400
231	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում					2,000
232	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում					6,000
233	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում					6,000
234	Հետևի կախոցի սայլենտ-բոկի սպասարկում					4,800
235	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում					8,000
7. Ղեկային մեխանիզմ						
236	Ղեկայունակի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները					32,000
237	Ղեկայունակի արորիկի փոխարինում					6,000
238	Ղեկայունակի առանցքային սնու փոխարինում					10,000
239	Ղեկայունակի խաչուկի փոխարինում					12,000
240	Ղեկայունակի վերանորոգման հավաքածուի փոխարինում					10,000
241	Ղեկայունակի քանդում, արատավորում, հավաքում					8,000
242	Ղեկայունակի կարգավորում					4,000
243	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում					4,000
244	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում					6,000

245	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի փոխարինում					2,000
246	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի նորոգում					2,000
247	Ղեկասյունակի պատյանի փոխարինում					2,000
248	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում					4,000
249	Ղեկային մեխանիզմի փականքի և հակաառևանգման մեխանիզմի փոխարինում					4,000
250	Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում					2,000
251	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում					8,000
252	Ղեկային կալունի ձգանների փոխարինում					6,000
253	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում					4,000
254	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում					2,000
255	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում					8,000
256	Ղեկի էլեկտրական կարգավորիչի փոխարինում					12,000
257	Ղեկային ճոճանակի նորոգման լրակազմի փոխարինում					2,000
258	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում					6,000
259	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում					12,000
260	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները					16,000
261	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում					4,000
262	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում					6,000
263	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում					6,000
264	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածույի փոխարինում					10,000
265	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում					2,000
266	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում					6,000

267	Ղեկային ձգաձողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում					6,000
268	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում					4,000
269	Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում					4,000
270	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում					2,000
8. Արգելակային համակարգ						
271	Վակումային ուժեղարարի փոխարինում					16,000
272	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում					2,000
273	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում					12,000
274	Գլխ. գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները					16,000
275	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում					12,000
276	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները					8,000
277	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում					6,000
278	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում					6,000
279	Առջևի սուպպորտի վերանորոգում					5,600
280	Հետևի սուպպորտի վերանորոգում					5,600
281	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում					4,000
282	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում					4,000
283	Արգելակային փողրակի փոխարինում					2,000
284	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում					3,200
285	Արգելակային համակարգի օդահանում					1,600
286	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում					3,200
287	Հետևի թմբուկային կոճղակների փոխարինում					3,200
